

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՈՃԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ

ԱՆՆԱ ՂԱՐՍԼՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
լեզուների ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
anna.gharslyan@asue.am

DOI: 10.54503/978-9939-481-23-4-238

Համառոտագիր

Հետազոտության հիմնական նպատակն է գիտական խոսքի ընդհանրականություն հատկանիշի համակարգված ուսումնասիրությունը և դրա մատուցումը տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողներին մասնագիտական խոսքի կառուցման օրինակներով:

Աշխատանքի գիտական նորույթը պայմանավորված է տնտեսալեզվաբանական մոտեցմամբ, այսինքն՝ միջգիտակարգային այնպիսի համագործակցությամբ, որը թույլ է տալիս լեզվագիտական նյութը բացատրել տնտեսագիտական ոլորտին վերաբերող թիրախային օրինակներով և առաջադրանքներով:

Հոդվածում մանրամասն վերլուծվում է ընդհանրականությունը որպես գիտական խոսքի բովանդակային-իմաստաբանական, լեզվաարտահայտչական և հաղորդակցման գործառական հատկանիշ:

Ուսումնական գործընթացի տեսանելիությունն ու արդյունավետությունն ապահովելու համար առաջարկվում է կիրառել ինտերակտիվ հանձնարարություններ և թվային գործիքներ:

Ընդհանրականության ուսուցման այս մոտեցումը ոչ միայն զարգացնում է ուսանողների ակադեմիական հաղորդակցության հմտությունները, այլև օգնում է հաղթահարել սեփական գիտական խոսքը հանրայնացնելու դժվարությունները՝ մեծացնելով հետաքրքրությունը մասնագիտական հետազոտությունների նկատմամբ:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ գիտական ոճ, ընդհանրականություն, տնտեսագիտական խոսք, միջգիտակարգային համագործակցություն, տնտեսալեզվաբանական մոտեցում, մասնագիտական հաղորդակցում:

A NEW APPROACH TO TEACHING THE GENERALIZATION FEATURE OF SCIENTIFIC STYLE IN ECONOMIC UNIVERSITIES

ANNA GHARSLYAN

Armenian State University of Economics
Chair of Languages
PhD in Linguistics, Associate Professor
anna.gharslyan@asue.am

Abstract

The primary objective of the research is the systematic study of the generalisation (abstractness) feature of scientific discourse and its presentation to students of economics faculties through examples of professional speech construction.

The scientific novelty of the work lies in the economolinguistic approach applied in the study, which is implemented through interdisciplinary cooperation. According to this approach, linguistic material is conveyed by transitioning from general scientific norms to specific examples and assignments enriched with economic content.

The article provides a detailed analysis of generalisation as a content-semantic, linguistic-expressive, and communicative-functional characteristic of scientific discourse.

To ensure the visibility and effectiveness of the learning process, the use of interactive assignments and digital tools is proposed.

This approach to teaching generalisation not only develops students' academic communication skills but also helps overcome difficulties in publicising their own scientific discourse, thereby increasing interest in professional research.

Keywords and phrases: Scientific style, generality, economic discourse, interdisciplinary collaboration, econolinguistic approach, professional communication.

НОВЫЙ ПОДХОД К ОБУЧЕНИЮ ОСОБЕННОСТЯМ ОБОБЩЕННОСТИ НАУЧНОГО СТИЛЯ В ЭКОНОМИЧЕСКИХ ВУЗАХ

АННА КАРСЛЯН

Доцент кафедры языков Армянского государственного
экономического университета,
кандидат филологических наук
anna.gharslyan@asue.am

Аннотация

Основная цель исследования — систематическое изучение категории обобщенности (abstractness) научной речи и ее представление студентам экономических факультетов на примерах построения профессиональной речи.

Научная новизна работы заключается в экономолингвистическом подходе, реализованном через междисциплинарное сотрудничество. Согласно этому подходу, лингвистический материал передается путем перехода от общенаучных норм к частным примерам и заданиям, насыщенным экономическим содержанием. В статье подробно анализируется обобщенность как содержательно-семантическая, языково-выразительная и коммуникативно-функциональная характеристика научной речи.

Для обеспечения наглядности и эффективности учебного процесса предлагается использовать интерактивные задания и цифровые инструменты.

Данный подход к обучению категории обобщенности не только развивает навыки академической коммуникации студентов, но и помогает преодолеть трудности в популяризации собственной научной речи, повышая интерес к профессиональным исследованиям.

Ключевые слова и фразы: научный стиль, обобщённость, экономический дискурс, междисциплинарное сотрудничество, экономико-лингвистический подход, профессиональная коммуникация.

Ներածություն

Գիտական ոճի ուսուցումը բարձրագույն ուսումնական հաստատություններում խիստ արդիական է և անհրաժեշտ, քանի որ համաշխարհային գիտակրթական համակարգի բուն զարգացումները պահանջում են գիտական միտք շարադրելու լեզվաոճական, մեթոդական և տեխնիկական բարձրակարգ հմտություններ: Ուստի հրատարակվում են միջազգային և տեղական գիտական ուղեցույցներ, հոդվածներ և մենագրություններ [17, 22, 23, 15, 11], ինչպես նաև բուհական համակարգում կազմակերպվում են սեմինարներ, աշխատաժողովներ և համաժողովներ՝ գիտությանը հետաքրքրվող ուսանողներին ներկայացնելով գիտահետազոտական աշխատանքներ կատարելու սկզբունքներն ու պահանջները (թեմայի ընտրություն, մեթոդաբանության մշակում, հետազոտական նախագծերի պատրաստում, հոդվածի կառուցվածք և այլն) [20, 11, 18, 8]:

Ինչ խոսք, ուղեցույցներն ու նպատակային հանդիպումները խթանում են ուսանողների շահագրգռվածությունն ու հետաքրքրությունը գիտության նկատմամբ, սակայն առանց լեզվաոճական հմտությունների համակարգված զարգացման նրանց առաջին գիտահետազոտական աշխատանքներում

նկատելի կլինեն ոճային թերություններ: Հետևաբար մասնագիտական բանավոր և գրավոր խոսք ձևակերպելու նպատակով առաջարկվում է հայկական բուհական համակարգում գիտական ոճի նորմերի ու կանոնների ուսուցման նոր մոտեցում՝ ուսանողներին լեզվագիտական նյութը հաղորդել մասնագիտական, տվյալ դեպքում՝ տնտեսագիտական խոսքի կառուցման օրինակներով՝ բացահայտելով տվյալ ոլորտին բնորոշ լեզվաոճական առանձնահատկություններն ու հնարավոր շեղումները՝ միաժամանակ զարգացնելով ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներ գրելու կարողություններն ու հմտությունները:

Հետազոտության գիտական նորույթը միջգիտակարգային համագործակցության հիման վրա լեզվագիտական նյութի հաղորդումն է՝ ընդհանուրից (գիտական նորմեր, կանոններ) մասնավորի (տնտեսագիտական նյութերով հագեցած ներտեքստային օրինակներ, առաջադրանքներ) անցմամբ ու ներկայացմամբ:

Հետազոտության նպատակն է գիտական խոսքի ընդհանրականության հատկանիշի համակարգված ուսումնասիրությունը և տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների համար տվյալ գիտական նյութի՝ նոր մոտեցմամբ մատուցումը:

Գիտական ոճի այսպիսի դասավանդումը՝ որպես մասնագիտական մտածողության և ակադեմիական հաղորդակցության հմտությունների ձևավորման գործընթաց, մեր հեղինակային հայեցակարգի (**հայերենի դասավանդումը որպես աշխատանքային լեզու մասնագիտական բուհերում**) [14, էջ 146] իրականացման հերթական քայլերից մեկն է:

Հայ գիտակրթական ասպարեզում առանձին մասնագիտական լեզուների ուսումնասիրության դեպքերը դեռևս սակավաթիվ են, թեև վերջին տարիներին որոշակի հետազոտական ակտիվություն է նկատվում մասնավորապես իրավագիտության, բժշկագիտության, տնտեսագիտության և ռազմագիտության բառապաշարի, խոսույթի լեզվաոճական հատկանիշների ուսումնասիրման ուղղությամբ, ինչը փաստում է լեզվաբանության հետաքրքրությունների սահմանների ընդլայնման մասին: Նշված ոլորտներն անմիջականորեն առնչվում են պետական կառավարման, հանրային անվտանգության, առողջապահության, տնտեսության և իրավունքի ոլորտների հետ: Դրանց լեզվական ձևակերպումների ճշգրտությունը անհրաժեշտ է ոչ միայն գիտական, այլև գործնական և իրավական տեսանկյունից: Ուսումնասիրությունները գրված են մասնավորապես մասնագիտական և գիտահանրամատչելի ոճով, առնչվում են բժշկագիտական լեզվի ուսուցման խնդիրներին [17], իրավական լեզվի բառապաշարի պատմահամեմատական քննությանը [15, 1], իրավական խոսույթի լեզվաոճական հատկանիշներին [21], առողջապահական ոլորտի թարգմանական հարցերին [23], տնտեսագիտական տերմինահամակարգի՝ լեզվաբանական մեթոդաբանությամբ քննությանը [13, 22] ժամանակակից հայերենի ռազմագիտական բառապաշարի կատարելագործման ուղիներին [9] և այլ նեղ մասնագիտական լեզվաբանական հարցերի: Այս բնույթի հետազոտական աշխատանքները մասնավորապես հողվածներ և մենագրություններ են, որոնք օժանդակում են գիտական ոլորտի ներկա և հաջորդ սերունդներին նոր ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է միջգիտակարգային համագործակցության սկզբունքով՝ համադրելով լեզվաբանական և տնտեսագիտական գիտակարգերը: Այս մոտեցումը թույլ է տալիս գիտական ոճի տեսական նորմերը դիտարկել ոչ թե մեկուսացված, այլ տնտեսագիտական խոսքի կառուցման օրինակներով:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. Համադրական և վերլուծական մեթոդներ. դրանց միջոցով քննվել են գիտական ոճի ընդհանուր հատկանիշները և բացահայտվել դրանց դրսևորման առանձնահատկությունները տնտեսագիտական տեքստերում:

2. Նկարագրական մեթոդ. կիրառվել է նկարագրելու գիտական խոսքի ընդհանրականություն լեզվաբանական և գործառական դրսևորումները:

3. Դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդներ. հետազոտությունն իրականացվել է ընդհանուրից (գիտական ոճի նորմեր) դեպի մասնավորը (տնտեսագիտական նյութերով հագեցած օրինակներ) անցմամբ, ինչպես նաև առանձին փաստերի հիման վրա ընդհանրացումներ կատարելու եղանակով:

Որպես հետազոտության նյութ ծառայել են տնտեսագիտական տերմինահամակարգը, ինչպես նաև մասնագիտական հոդվածներից քաղված օրինակները:

Մեթոդաբանության կարևոր բաղադրիչ է նաև տեսական նյութի մատուցման և գործնական հմտությունների ամրապնդման զուգակցումը: Այդ նպատակով առաջարկվում է կիրառել ինտերակտիվ հանձնարարություններ և թվային գործիքներ, օրինակ՝ Kahoot և Quizizz հարթակները, որոնք ապահովում են ուսուցման գործընթացի տեսանելիությունն ու արդյունավետությունը:

Այս համալիր մեթոդաբանությունը նպատակ ունի զարգացնել ուսանողների՝ գիտական նյութը մասնագիտական համատեքստում շարադրելու լեզվառձական հմտությունները:

Վերլուծություն: Գիտական ոճը գրական լեզվի գործառական ոճերից մեկն է, որը կիրառվում է գիտական մտածողության, հետազոտական արդյունքների և մասնագիտական նյութերի փոխանցման նպատակով: Առավելապես գործածվում է գրավոր խոսքում և ունի հիմնականում մենախոսական բնույթ: Ձևավորվում է գրական լեզվի օրինաչափություններով, կառուցվում տրամաբանված, կուռ և հետևողական դատողություններով, հենվում փաստերի ու փաստարկների, եզրահանգումների վրա [7, էջ 39]: Գիտական մտքի շարադրման սկզբունքներն ու պահանջներն ընդհանուր են բոլոր գիտաձյուղերի համար, քանի որ ունեն մեկ միասնական նպատակ՝ ստեղծել օբյեկտիվ, փաստարկված, տրամաբանական կառուցվածք ունեցող գրավոր խոսք, որն արդյունավետորեն կհաղորդվի, կընկալվի, կվերարտադրվի ու կկիրառվի գիտությամբ զբաղվող ներկա և հաջորդ սերունդների համար:

Սակայն գիտական միասնական ոճը չի բացառում լեզվառձական, մեթոդական տարբերություններ գիտաձյուղերի միջև, ինչը պայմանավորված է տվյալ ոլորտի գիտական մտածողությամբ, հաղորդակցման խնդիրներով և դրանց լուծման եղանակներով: Սույն դիտարկումը լավագույնս երևում է հասարակագիտական (տնտեսագիտություն, սոցիոլոգիա, քաղաքականություն), բնագիտական (ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա, ինֆորմատիկա) և հումանիտար (լեզվաբանություն, գրականագիտություն, պատմություն) գիտությունների գիտաոճերի հակադրության մեջ:

Աղյուսակ 1.

Տարբեր գիտությունների գիտական ոճի բնորոշիչ առանձնահատկությունները

Գիտություն	Գիտական ոճի հիմնական բնութագրիչներ
Տնտեսագիտություն	վիճակագրական տվյալներ, ցուցանիշներ, աղյուսակներ, գրաֆիկներ, դիագրամներ, պատճառահետևանքային կապակցությունների ակտիվ կիրառություն,
Ֆիզիկա	սահմանումների գերակշռություն, օրենքների, բանաձևերի, տեսությունների հաջորդական ներկայացում, հիփոթեզի ստուգում փորձով
Գրականագիտություն	բնագրային փաստեր, մեջբերումներ լեզվաոճական և կառուցվածքային միավորներ քննադատական-վերլուծական և համադրական դատողություններ

Չնայած ոճական յուրահատկություններին՝ սույն և մնացած գիտությունների գրական լեզուն ձևակերպվում է գիտական ոճի հիմնական հատկանիշ-արժանիքների հիման վրա: Դրանք են՝

- **ընդհանրականություն,**
- **ճշտություն**
- **ճշգրտություն,**
- **տրամաբանություն [2, էջ 14]:**

Տնտեսագիտությունը գիտական ոճի համընդհանուր նորմերն ու հիմնական հատկանիշները իրացնում է իր գիտաոճային առանձնահատկություններին համապատասխան՝ ապահովելով գիտական մտքի օրինաչափ ձևակերպում:

Ներկայացնենք տնտեսագիտական խոսքում գիտական ոճի հիմնական հատկանիշներից ընդհանրականության ուսումնասիրությունն ու ուսուցման եղանակները՝ բացահայտելով մասնագիտական խոսքի լեզվաոճային շեղումներն ու առանձնահատկությունները:

Հավելենք, որ հողվածը դիտարկվելու և կիրառվելու է որպես դասախոսություն՝ ուղեկցված անհատական և թիմային համապատասխան առաջադրանքներով, սահիկաշարով, որոնք ավելի ընկալելի և տեսանելի կդարձնեն տեսական նյութի հաղորդումը:

1. Ընդհանրականություն

Սա գիտական ոճի այն հատկանիշն է, համաձայն որի՝ մասնագիտական խոսքը կառուցվում է օրինաչափ՝ գիտական նորմերի և կանոնների ձևակերպմամբ, համընդհանուր գիտելիքի հիման վրա, օբյեկտիվությամբ, ընդհանուր հասկացությունների և տերմինների կիրառմամբ, փաստերի և ապացույցների հիմնավորմամբ՝ զերծ մնալով սուբյեկտիվ, թեական մտքերից ու ընկալումներից:

Ընդհանրականությունը, լինելով գիտական խոսքի կարևորագույն բաղադրիչ, նպատակահարմար է ներկայացնել լեզվաբանական և գործառական հետևյալ խմբավորմամբ.

1. Ընդհանրականությունը՝ որպես գիտական խոսքի բովանդակային-ինասպարանական հատկանիշ

Գիտական խոսքում ընդհանրականությունը դրսևորվում է իրականության մեջ առկա հասկացությունները որպես կրկնվող, օրինաչափ և տիպաբանական երևույթներ ներկայացնելու միտումով: Սույն հատկանիշի նպատակն է ոչ թե նկարագրել, այլ բացահայտել ուսումնասիրվող երևույթների մասնագիտական ընդհանուր նշանակությունը, գործառույթներն ու փոխկապակցվածությունը այլ երևույթների հետ: Գիտական միտքը շարադրվում է **վերացական հասկացությունների գերակշռությամբ**, որոնք արտահայտում են ընդհանրացված գիտելիք և ապահովում գիտական հաղորդակցման օբյեկտիվությունն ու համընդհանուր հասկացողությունը: Օրինակ՝

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) մակրոտնտեսական ընդհանրացված ցուցանիշ է, որն արտացոլում է տվյալ երկրի տնտեսության բոլոր ձյուղերում որոշակի ժամանակահատվածում արտադրված ապրանքների ու ծառայությունների ընդհանուր արժեքը [4, էջ 174]:

Այս ձևակերպման մեջ ՀՆԱ-ն սահմանվում է որպես մակրոտնտեսական ցուցանիշ, որը ներկայացնում և համեմատում է տնտեսական տարբեր համակարգերի ակտիվության մակարդակը:

Նույնպիսի վերացական հասկացություններ են անվանում *գնաձ, գնանկում, ֆինանսական ձգնաժամ, մրցակցություն, ցլերի շուկա* տերմինները, որոնք գործածվում են տնտեսական կյանքում ընդհանուր օրինաչափությունների բացահայտման նպատակով:

Ընդհանրականությունը բովանդակային մակարդակում ունի մեկ այլ առանձնահատկություն. այն որոշակի փաստերի բացահայտմամբ կարող է դրսևորվել որպես ընդհանրացնող գործառույթ: Այսպես՝

Վերջին ամիսներին աշխատավարձերի աճի տեմպի դանդաղումը, զբաղվածության մակարդակի նվազումը և սպառողական պահանջարկի կրճատումը փաստում են աշխատանքային շուկայի թուլացումը:

Սույն ձևակերպման մեջ 3 որոշակի փաստեր դառնում են մեկ ընդհանուր երևույթի բացահայտման ընդհանրական հիմք:

2. Ընդհանրականությունը՝ որպես գիտական խոսքի լեզվաարտահայտչական հատկանիշ

Գիտական խոսքում ընդհանրականությունը դրսևորվում է մեծ մասամբ **գիտական տերմինաբանությամբ**, քանի որ տերմիններն ունեն ընդհանրական բնույթ և միանշանակ արժեք [2, էջ 15], օրինակ՝ *փոխարժեք, դրամական հոսք, ազգային եկամուտ* և այլն, **օբյեկտիվություն, չեզոքություն հաղորդող բառերով, կապակցություններով և արտահայտություններով**, որոնք ընդգծում են գիտական խոսքի փաստարկված և հիմնավորված լինելը, ինչպես՝ *սոցիալաբան, սովորաբար, ընդհանրապես, հիմնականում, ընդհանուր առմամբ, մեծ մասամբ, որպես կանոն, ըստ էության, ըստ որի, համաձայն որի, ըստ այդմ, ուսումնասիրությունները վկայում են..., սույն հետազոտության նպատակն է վերլուծել..., արդյունքները ցույց են տալիս..., հետազոտողների մեծ մասը պնդում է..., մասնագիտական խոսքին հատուկ օրինակներ՝ համաձայն Համաաշխարհային բանկի հետազոտության..., համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների..., ըստ Զրոսաշրջության*

և ճանապարհորդության համաշխարհային խորհրդի վերջին ցուցանիշների..., համաձայն ուսումնասիրված մոդելի արդյունքների... և այլն: Մեջբերենք.

Փորձագիտական հարցման արդյունքների համաձայն՝ 44.74%-ը չի օգտվում ՀՀ էլեկտրոնային առողջապահության միասնական համակարգից անձնական տեղեկատվության պահպանման նպատակով [6, էջ 94]:

Գիտական խոսքին ընդհանրականություն և վերացականություն են հաղորդում նաև **բայանուններն ու վերացական գոյականները**, որոնք արտահայտում են կրկնվող կամ տիպային հասկացություններ, ինչպես՝ *զարգացում, ձեռքբերում, սահմանափակում, նշանակություն, համակարգ, գործընթաց, միտում, գործոն, գործառույթ, առնչություն, անհրաժեշտություն, կարևորություն, արդյունավետություն, մարտահրավեր* և այլն: Այս շարքը համալրում են նաև այն տերմինային լեզվամիավորները, որոնք բայանուններ և վերացական գոյականներ են, օրինակ՝ *կառավարում, ներդրում, ֆինանսավորում, գնանկում, կայունություն, գնաձ, բիզնես* և այլն:

Քերականական կառույցները ևս կարևոր դեր են խաղում ընդհանրականության լեզվական իրացման մեջ՝ ապահովելով գիտական խոսքի չեզոք և օբյեկտիվ բնույթը: Գործողության ընդհանրականությունը դրսևորվում է **ա. չեզոքություն արտահայտող դիմավոր բայերով**, օրինակ՝ *կիրառվում է, ուսումնասիրվում են, արձանագրվում են, վկայում են, բ. բաղադրյալ ստորոգյալներով*, օրինակ՝ *պետք է, անհրաժեշտ է, կարելի է, կարող է (դիրարկել, փաստել, ներկայացնել)*: Մեջբերենք.

Եկամուտների բևեռացումն **արտահայտվում է** նաև Պալմայի գործակցի միջոցով, որը **որոշվում է** բնակչության ամենահարուստ 10 %-ին և ամենաաղքատ 40 %-ին բաժին ընկնող եկամուտների հարաբերությամբ [10, էջ 10]:

Անասնաբուծությունից ստացվող համախառն արտադրանքի ներկայիս ծավալները **չեն կարող բավարարել** հանրապետության ազգաբնակչության պահանջները [3, էջ 36]:

Քննարկենք նույն բովանդակությունն արտահայտող, բայց ոճական տարբերություն ունեցող 2 նախադասություն:

Ձևակերպում	Ոճական բնութագիր
<ul style="list-style-type: none"> • Ես կարծում եմ, որ Հայաստանի շուկան վատ վիճակում է: 	<p>Գիտական ոճի նորմերի խախտում</p> <ul style="list-style-type: none"> • Նախադասությունը սուբյեկտիվ մտքի արտահայտում է (Ես կարծում եմ...): • Միտքը հիմնավորված չէ: • Ընդհանրական և մասնագիտական բառեր (բացառությամբ շուկա բառի) ու կապակցություններ գործածված չեն: • Գրված է խոսակցական ոճով:

<ul style="list-style-type: none"> • Համաձայն 2023–2025 թվականների տնտեսագիտական ցուցանիշների համապարփակ վերլուծությանը՝ Հայաստանի Հանրապետությունում առկա են շուկայի անկման միտումներ (տես Աղյուսակ 1): 	<p style="text-align: center;">Գիտական ոճի նորմերի պահպանում</p> <ul style="list-style-type: none"> • Նախադասությունը ձևակերպված է ընդհանրական ոճով՝ բացակայում են սուբյեկտիվ կարծիք արտահայտող բառեր և արտահայտություններ: • Միտքը հիմնավորված է, ներկայացված է Աղյուսակ 1-ում: • Նախադասության մեջ առկա են ընդհանրական և մասնագիտական կապակցություններ, վերացական գոյականներ՝ <i>համաձայն տնտեսագիտական ցուցանիշների համապարփակ վերլուծությանը, շուկայի անկում, միտում</i>: • Գիտական խոսքում հատուկ անունները գրվում են իրենց պաշտոնական անվամբ (Հայաստանի Հանրապետություն):
---	--

3. Ընդհանրականությունը՝ որպես գիտական խոսքի հաղորդակցման գործառական հատկանիշ

Գիտական հաղորդակցության գլխավոր նպատակն է գիտելիքի փոխանցումը, տարածումն ու վերարտադրումը գիտական հանրության լայն շրջանակի համար: Ընդհանրականության միջոցով նյութը հաղորդվում է ոչ թե հեղինակի սուբյեկտիվ, այլ ընդհանուր գիտական դիրքորոշմամբ, որը ձևավորվում է օրինաչափությունների և պատճառահետևանքային կապերի բացահայտմամբ, փաստերի և վերլուծությունների ներկայացմամբ՝ բացառելով հուզականությունն ու սուբյեկտիվ գնահատումը: Այսպես՝ տնտեսագիտական խոսքում ընդհանրականության հաղորդակցման գործառույթը ուղղված է ոչ թե որոշակի հասցեատիրոջ, այլ ազգային և միջազգային գիտական հանրությանը: Այդ նպատակով կիրառվում են մասնագիտական ընդհանուր հասկացություններ, մոդելներ, չափանիշներ, վերլուծական տվյալներ և ցուցանիշներ: Օրինակ՝

«Global Justice Now» միջազգային հետազոտական ընկերության տվյալների համաձայն՝ 2018 թ. տվյալներով աշխարհի 200 տնտեսական միավորներից եկամտի մեծությամբ 157–ը եղել են վերազգային կորպորացիաները, այլ ոչ թե պետությունները [5, էջ 114]:

Ընդհանրականության սույն հատկանիշը նպաստում է գիտական հաղորդակցության արդյունավետությանը՝ գիտելիքը դարձնելով համընդհանուր գիտական արժեք:

Ընդհանրականության դասավանդումը՝ տնտեսագիտական խոսքի կառուցման օրինակներով, ուղեկցվում է յուրաքանչյուր ենթաթեմային համապատասխան առաջադրանքներով և ամփոփվում հարցուպատասխանով կամ ինտերակտիվ հանձնարարություններով (խաղ, թեստ՝ Kahoot, Quizizz թվային գործիքներով): Օրինակ՝

1. Տրված նախադասություններում գտնել այն բառերն ու կապակցությունները, որոնք խախտում են գիտական ոճի ընդհանրական բնույթը:

1.1. Օգտվելով հուշող բառերից ու կապակցություններից՝ վերաձևակերպել նախադասությունները՝ վերականգնելով դրանց ընդհանրականությունը:

ա. Մեր գնահատմամբ հայկական սփյուռքը վիթխարի դերակատարում ունի երկրի տնտեսական զարգացման մեջ:

(համաձայն, Համաշխարհային բանկի հետազոտություն, ցուցանիշ, նշանակալի, դեր խաղալ, տնտեսություն, գործընթաց)

Համաձայն Համաշխարհային բանկի հետազոտության ցուցանիշների՝ հայկական սփյուռքը նշանակալի դեր է խաղում երկրի տնտեսության զարգացման գործընթացում:

2. «Բանքեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի տրված հոդվածից դուրս գրել ընդհանրական միտք արտահայտող բառեր, կապակցություններ և արտահայտություններ պարունակող նախադասություններ:



3. Տրված տեքստերից դուրս գրել բայանուններ և վերացական գոյականներ:

ա. Փողի ժամանակային արժեքի տեսությունը չի հակասում կայուն զարգացման գաղափարին:

բ. Թվայնացման միտումներն առանցքային նշանակություն ունեն ինչպես Հայաստանի տնտեսության, այնպես էլ թվային հասարակության ձևավորման համատեքստում:

Եզրակացություն

Միջգիտակարգային համագործակցությամբ ուղեկցվող նոր մոտեցումը ապահովում է գիտական ռճի ընդհանրականություն հատկանիշի արդյունավետ ուսուցում տնտեսագիտական բուհերի ուսանողության համար, մեծացնում նրանց հետաքրքրությունը մասնագիտական հետազոտական աշխատանքներ կատարելու ուղղությամբ, կուտակում գիտական խոսք շարադրելու նոր գիտելիքներ ու փորձ՝ այսկերպ հաղթահարելով 1-ին հեղինակային գիտական խոսք հանրայնացնելու դժվարությունները:

Տեսական և գործնական նյութերի համադրությամբ շարադրված սույն աշխատանքը ընդգծում է ընդհանրականության անփոխարինելի ներկայությունը գիտական խոսքում, հաղորդում դրա կիրառման եղանակները՝ նյութն ուսուցանելով ու ամրապնդելով մասնագիտական գրականության, բառապաշարի հիմքով կազմված օրինակներով և առաջադրանքներով:

Սույն հետազոտությունը ոչ միայն կօժանդակի գիտական ոլորտում նոր ուսումնասիրություններ կատարելուն, այլև կծառայի որպես դասախոսական նյութ ուսանողների համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբաջյան Ա., Մանուկ Աբեղյանի ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանը // Բանքեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2024, հ. 3, էջ 6-15:
2. Աբրահամյան Ս. Գիտական ռճը և նրա առանձնահատկությունները // Լրաբեր հասարակական գիտությունների, 3, Երևան, Հայկական ՄՍՀ Գիտությունների ակադեմիա, 1982, էջ 14-26:
3. Ալեքսանյան Վ., Հովհաննիսյան Դ., Մատինյան Ա., Ղուկասյան Ա., Ֆուրաժային հացահատիկի արտադրության զարգացման հեռանկարները ՀՀ պարենային անվտանգության ապահովման համատեքստում // Բանքեր Երևանի համալսարանի. Հասարակական գիտություններ. Տնտեսագիտություն, 2022, 13(3), էջ 32-44:
4. Բայադյան Ա., Ֆինանսական բացատրական բառարան, Երևան, Ատողիկ, 2004, 334 էջ:
5. Գևորգյան Գ., ՀՀ տնտեսական ինքնիշխանության հիմնահարցերը արտաքին

տնտեսական հարաբերությունների համատեքստում // Բանբեր ՀՊՏՀ, 2022, (3), էջ 112-130:

6. Գևորգյան Ռ., Սարգսյան Վ., Ավետիսյան Կ., Մինասյան Կ., Թվային փոխակերպումների զարգացման միտումները ՀՀ-ում // Բանբեր Երևանի համալսարանի. Հասարակական գիտություններ. Տնտեսագիտություն, 2022, 13(3), էջ 92-101:
7. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 376 էջ:
8. Երևանի պետական համալսարան, Ինչպես գրել գիտական հոդված // URL: <https://www.y-su.am/news/How-to-write-scientific-articles>, 10.02.2026:
9. Խաչատրյան Ա., Ժամանակակից հայերենի ռազմագիտական բառապաշարի կատարելագործման ուղիները // Հայերենագիտության արդի հիմնահարցեր (գիտաժողովի նյութեր), Երևան, ՀՀ ԳԱԱ, 2023, էջ 114-119:
10. Խառատյան Ա., Գալստյան Ա., Եկամուտների անհավասարության և աղքատության արդի միտումները // Բանբեր Երևանի համալսարանի. Հասարակական գիտություններ. Տնտեսագիտություն, 2022, 13(3), էջ 76-91:
11. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Գիտահետազոտական աշխատանքի հիմունքները՝ մեկ հանդիպման շրջանակում // URL: <https://asue.am/news/one-informational-meeting>, 15.12.2025
12. Հովհաննիսյան Գ., Գալստյան Ն., Մողոմնյան Մ., Մալխասյան Մ., Գիտահետազոտական աշխատանք կատարելու սկզբունքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 72 էջ:
13. Ղարսյան Ա., Տնտեսագիտական բառապաշարի դասավանդումը լեզվաբանական մեթոդաբանությամբ (դասախոսություններ), Երևան, Լուսակն, 2023, 112 էջ:
14. Ղարսյան Ա., Տնտեսագիտական բուհերում հայերենի դասավանդման նոր մոտեցումներ // Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակի նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ԳԱԱ ԼԻ հրատ., 2025, էջ 139-149:
15. Ղարսյան Ա., Արդի հայերենի իրավաբանական տերմինները, Երևան, Լուսակն, 2022, 176 էջ:
16. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ինչպես գրել գիտական հոդված, 2022 // URL: <https://sp.nuaca.am/index.php/sp/libraryFiles/downloadPublic/1>:
17. Սուքիասյան Հ., Թոռունյան Ն., Բժշկագիտական լեզվի ուսուցման խնդիրները // Բժշկություն, գիտություն և կրթություն, 37, 2024, մայիս, էջ 115-119:
18. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, «Ինչպես գրել գիտական հոդված. գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանություն» թեմայով սեմինար // URL: https://brusov.am/hy/content/_inchpe_s_grel_gitakan_hodvats_gitahetazotakan_ashkhatanqi_metodabanutyun_temayov_seminar/, 26.03.2025:
19. Alencar M. S. D. & Alencar T. T. D. Scientific Style in English (1st ed.). River Publishers, 2017, 154 p. // URL: <https://doi.org/10.1201/9781003339366>
20. Central University of Europe, Research week for students 2025 was held // URL: <https://cue.edu.ge/en/research-week-for-students-2025-was-held-at-central-university-of-europe/>, 10.02.2026.
21. Gasparyan S., Hayrapetyan Z., Discourse at the crossroads of language and law // Folia Anglistika, 2023, 19(2), pp. 13-27 // URL: <https://doi.org/10.46991/AFA/2023.19.2.013>.
22. Gharslyan A., Terminological investigation into the domain of economic phrases // Messenger of ASUE, 2024, 3, pp. 106-117:
23. Hovhannisyan G., Vahanyan A., Tatevyan H. Features of translation and training of interpreters in the healthcare sector // Armenian Journal of Health & Medical Sciences (AJHMS), 2023, Vol. 3, No. 2 (III), pp. 56-66.
24. Huguet J., Gaya J. M., Rodríguez-Faba O., Breda A., Palou J., The style of scientific communication // Actas Urológicas Españolas (English Edition), 2018, 42(6), pp. 357-362 // URL: <https://doi.org/10.1016/j.acuro.2018.02.013>.
25. Picardi N., Rules to be adopted for publishing a scientific paper // Annali Italiani di Chirurgia, 2016, 87, pp. 1-3